ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1112

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և Հայաստանի Սպառողական Կոոպերատիվների միության «Ախուրյանի Կոոպշին» ՍՊԸ -ի միջև 04.12.2024թ. կնքված «ՀՀ Շիրակի մարզի Փոքր Մանթաշ գյուղի միջնակարգ դպրոցի կառուցման» աշխատանքների կատարման թիվ ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/77 պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան «25» 05 **2026թ.**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ի դեմս հիմնադրամի գործադիր տնօրեն Սարգիս Բաղինյանի (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից և **Հայաստանի Սպառողական Կոոպերատիվների միության «Ախուրյանի Կոոպշին» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արմեն Տոնոյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա** (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով Կողմերի միջև **04.12.2024թ. կնքված «ՀՀ Շիրակի մարզի Փոքր Մանթաշ գյուղի միջնակարգ դպրոցի կառուցման» աշխատանքների կատարման թիվ ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/77 պայմանագրի** (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5-րդ կետը, **կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.**

1. Պայմանագիրը լրացնել նոր՝ Հավելված թիվ 1.2-ով՝ համաձայն սույն համաձայնագրի Հավելվածի:
2. Պայմանագրի 8-րդ «ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ» բաժնի 8.11 կետում՝ «N 1» բառերից հետո ավելացնել «N 1.2» բառերը:
3. Պայմանագրի 8-րդ «ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ» բաժինը լրացնել 8.11.1 կետով հետևյալ բովանդակությամբ՝ «8.11.1 Կողմերը պարտավոր են պահպանել Հավելված 1.2-ով սահմանված պայմաններն ու պահանջները:»:
4. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

5. Համաձայնագիրը կազմված է 6 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ 2 օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ **Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ** Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31 ՀՎՀՀ՝ 00846441 Հ/Հ 900011051746 Կենտրոնական գանձապետարան Գործադիր տնօրեն՝ **Ս. Բաղինյան** /ստորագրություն/	**ԿԱՊԱԼԱՌՈՒ** **Հայաստանի Սպառողական Կոոպերատիվների միության «Ախուրյանի Կոոպշին» ՍՊԸ** Հասցե՝ ՀՀ, ք. Գյումրի, Թբիլիսյան խճղ. 1 ՀՎՀՀ՝ 05801184 Հ/հ՝ 2050122006191001 Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ Տնօրեն՝ **Ա.Տոնոյան** /ստորագրություն/

Հավելված

04.12.2024թ. կնքված

ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/77 ծածկագրով

աշխատանքների գնման պայմանագրի

«25» 05 2026թ.

կնքված Համաձայնագիր

«Հավելված 1.2

04.12.2024թ. կնքված

ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/77 ծածկագրով պայմանագրի

ԾԻՓ-ի (ծրագրերի իրականացման փաստաթղթի) և ԱՎՀՎ-ն (արդյունքի վրա հիմնված վարկավորման) ուղեցույցերից՝ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԽԱՐԴԱԽՈՒԹՅՈՒՆԸ, ԿՈՌՈՒՊՑԻԱՆ և ԱՅԼ ԱՐԳԵԼՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒ և ՄԵՂՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. Ծրագրում մասնակից բոլոր անհատներն ու կազմակերպությունները պարտավոր են պահպանել ԱԶԲ-ի կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականությունը (1998) և հետաքննության և գործադիր շրջանակը (2024)՝ ժամանակ առ ժամանակ փոփոխվող, ինչպես նաև, որպես այդպիսին, պարտավոր են պահպանել ամենաբարձր էթիկական չափանիշները, ձեռնարկել բոլոր համապատասխան միջոցները՝ խարդախությունը, կոռուպցիան և բարեվարքության այլ խախտումները կանխելու կամ մեղմացնելու ուղղությամբ, և զերծ մնալ նման վարքագծից՝ կապված ծրագրերի հետ:
2. ԱԶԲ-ի կողմից որակազրկված կամ կասկածի տեղիք տված ցանկացած անհատ կամ կազմակերպությունը ծրագրի շրջանակներում չունի պայմանագրի շնորհման իրավասություն կամ ծրագրի այլ կերպ մասնակցության իրավունք նման որակազրկման կամ կասեցման ժամանակահատվածում:
3. ԱԶԲ-ի որակազրկման և կասեցման վերաբերյալ գրանցամատյանը հասանելի է sanctions.adb.org կայքում:
4. Խարդախության, կոռուպցիայի և բարեվարքության այլ խախտումների մասին մեղադրանքները կարող են հաղորդվել ԱԶԲ-ի կոռուպցիայի դեմ պայքարի և բարեվարքության գրասենյակ հետևյալ միջոցներից որևէ մեկով՝ i) էլեկտրոնային փոստով՝ integrity@adb.org կամ anticorruption@adb.org հասցեներով, ii) բողոքարկման ձևաթղթի միջոցով, iii) +63 2 8632 5004 ձայնալսումներից ապահովված հեռախոսահամարով, iv) +63 2 8636 2152 հեռապատճեով, կամ v)

3

փոստով առաքմամբ՝ հետևյալ հասցեով՝ կոռուպցիայի դեմ պայքարի և բարեվարքության գրասենյակ, Ասիական զարգացման բանկ, ԱԶԲ պողոտա 6, Մանդալույոնգ քաղաք, 1550 Մետրո Մանիլա, Ֆիլիպիններ,

5. ՀՏԶՀ-ն իրավունք ունի մերժել առաջարկվող պայմանագիրը շնորհումը որակազրկված կամ կասեցման ենթակա կազմակերպություններին:

Պահանջներ շրջակա միջավայրի վրա ազդեցության, սոցիալական պաշտպանության և աշխատանքի առողջության ու անվտանգության ոլորտում

6. Կապալառուն պետք է սերտորեն համագործակցի ՀՏԶՀ-ի և ԱԾԻԳ-ի (առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ) հետ նախագծման փուլում՝ հնարավոր շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցություններից խուսափելու և դրանք նվազագույնի հասցնելու, ինչպես նաև ազգային օրենսդրությանը և ԱԶԲ-ի 2009 թվականի անվտանգության մեխանիզմների քաղաքականության հայտարարությանը (ԱՄՔՀ) լիարժեք համապատասխանությունն ապահովելու նպատակով:
7. Կապալառուն պարտավոր է՝ **ա)** ստեղծել գործող համակարգ շրջակա միջավայրի ազդեցությունների կառավարման համար, **բ)** մշակել տեղամասին հատուկ բնապահպանական, սոցիալական, առողջության ու անվտանգության կառավարման պլան (ԲՍԱԱԿՊ), որը համապատասխանում է ծրագրի բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակի (ԲՍԿՇ) և բնապահպանական և սոցիալական անվտանգության երաշխիքներ (ԲՍԵ) պահանջներին, և գ) հատկացնել անհրաժեշտ բյուջե՝ ապահովելու, որ նշված միջոցառումները իրականացվեն:

ԲՍԱԱԿՊ-ը պետք է ներառի մանրամասն անհատական կառավարում հետևյալ ոլորտների համար՝

- կոշտ և հեղուկ թափոնների կառավարում,
- կենսաբազմազանության կառավարում,
- ճանապարհային երթևեկության գերբեռնվածության կառավարում,
- փոշու և աղմուկի աղտոտվածության կառավարում,
- աշխատանքի առողջություն և անվտանգություն, ինչպես նաև արտակարգ իրավիճակներին արձագանքում,
- շինարարների կառավարում (անհրաժեշտության դեպքում):
- մուտքի ճանապարհներ,
- աշխատանքային գրաֆիկ:

4

- առաջին բուժօգնության պարագաներ և արտակարգ իրավիճակներին արձագանքման սարքավորումներ:
- աշխատակիցների համար նախատեսված ճամբարների տեղակայումներ (անհրաժեշտության դեպքում):

8. Կապալառուն պետք է Պատվիատուից ստանա թույլտվություն՝ շինարարական աշխատանքները մեկնարկի համար՝ հիմնվելով հաստատված ՍՊՈՒՀ-ի (սոցիալական պատշաճ ուսումնասիրության հաշվետվություն) և(կամ) ՀՕՏՇ-ի (հողի օտարման և տարաբնակեցման շրջանակ), ինչպես նաև ՀՕՏՇ համապատասխանության զեկույցների վրա:
9. Կապալառուն պետք է ստանա Պատվիրատուից հաստատում ԲՍԱԱԿՊ-ի համար՝ շինարարական աշխատանքների մեկնարկից սկսելուց առաջ:
10. Կապալառուն պետք է նշանակի անձնակազմ, որը պատասխանատու կլինի բնապահպանական, սոցիալական, առողջության և անվտանգության հարցերի իրականացման, մոնիթորինգի և հաշվետվությունների ներկայացման համար:
11. Կապալառուն պետք է նշանակի անձնակազմի անդամներից մեկին՝ բողոքների հասցեագրման մեխանիզմները վերահսկելու համար, քանի որ սույն անձը կարող է հանդես գալ որպես կոնտակտային անձ և, անհրաժեշտության դեպքում, մասնակցել որպես բողոքների լուծման հանձնաժողովի (ԲԼՀ) անդամ՝ ծրագրի[1] շրջանակներում ստեղծված բողոքների լուծման մեխանիզմները (ԲԼՄ) շրջանակներում:
12. Շինարարությունից առաջ կազմակերպել հանրային լսումներ ազդակիր համայնքներում և շահագրգիռ կողմերի հետ՝ բնապահպանական, սոցիալական և առողջության և անվտանգության հարցերի վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու և ցանկացած մտահոգություն քննարկելու հնարավորություն ընձեռելու նպատակով: Բարձրացված բոլոր հարցերը և դրանց լուծումը պետք է փաստաթղթավորվեն և ներկայացվեն Պատվիրատուին:
13. Ստանալ շրջակա միջավայրին առնչվող թույլտվություններ և լիցենզիաներ (անհրաժեշտության դեպքում):

---

[1] Ծրագրի շրջանակներում ստեղծված ԲՀՄ-ի շրջանակներում կապալառուի ներկայացուցիչը, որը հանդես է գալիս որպես ԲՀՄ-ի կոնտակտային անձ, կստանա և կգրանցի ազդակիր համայնքների ԱԱ (ազդակիր անձիք) բողոքները և կուղարկի դրանք ՀՏՋՀ: (Այս ծրագրով սահմանված ԲՀՄ-ի և բողոքների լուծման քայլերը մանրամասն նկարագրված են Ծրագրի ՀՕՏՇ-ում (Բաժին J. Բողոքներ և բողոքներ): Կապալառուն անհապաղ կտեղեկացնի ՀՏՋՀ-ին ծրագրի շինարարության փուլում դիտարկված ցանկացած անկանխատեսելի սոցիալական ազդեցության մասին և կպատրաստի վնասի մասին զեկույց (որը պետք է ստորագրվի ԱԱ-ց կողմից):

5

14. Կապալառուն Պատվիրատուին պետք է ներկայացնի ամսական անվտանգության մոնիթորինգի հաշվետվություններ՝ ըստ համաձայնեցված ձևանմուշի, որը փաստաթղթավորում է ԲՍԱԱԿՊ-ի և բողոքների լուծման մեխանիզմի պահանջներին համապատասխան:
15. Կապալառուն պետք է 3 օրվա ընթացքում Պատվիրատուին հաղորդի ցանկացած միջադեպի, վթարի, նշանակալի իրադարձությունների և բողոքների մասին՝ առաջարկելով ուղղիչ գործողություններ:
16. Կապալառուն պետք է իրականացնի անվտանգության մոնիթորինգի հաշվետվություններում նշված բոլոր ուղղիչ կամ կանխարգելիչ գործողությունները, որոնք Պատվիրատուն պարբերաբար կպատրաստի ԲՍԱԱԿՊ-ի համապատասխանությունը վերահսկելու նպատակով, և անհրաժեշտության դեպքում պետք է փոփոխի ԲՍԱԱԿՊ-ը:
17. Կապալառուն պետք է մասնակցի Պատվիրատուի կողմից կազմակերպվող անվտանգությանն առնչվող վերապատրաստումներին:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	**Հայաստանի Սպառողական Կոոպերատիվների միության «Ախուրյանի Կոոպշին» ՍՊԸ**
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31	Հասցե՝ ՀՀ, ք. Գյումրի, Թբիլիսյան խճղ. 1
ՀՎՀՀ՝ 00846441	ՀՎՀՀ՝ 05801184
Հ/Հ 900011051746	Հ/հ՝ 2050122006191001
Կենտրոնական գանձապետարան	Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Գործադիր տնօրեն՝ **Ս. Բաղինյան**	Տնօրեն՝ **Ա.Տոնոյան**
/ստորագրություն/	/ստորագրություն/

6

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը ստորև ներկայացնում է իր կարիքների համար «**ՀՀ Շիրակի մարզի Փոքր Մանթաշ գյուղի միջնակարգ դպրոցի կառուցման»** աշխատանքների նպատակով կազմակերպված **N ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/77** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **04.12.2024թ.** կնքված **N ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/77** պայմանագրում 25.05.2026 թ. կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝	Պայմանագրի կետի և նոր հավելվածի ավելացման հիմքի առկայություն
Փոփոխության նկարագրություն՝	Պայմանագրի կետի և նոր հավելվածի ավելացում
Փոփոխության հիմնավորում՝	Պայմանագրի 8.5 կետը

Պատվիրատու՝Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

ОБЪЯВЛЕНИЕ
об изменениях, внесенных в заключенный договор

Армянский фонд территориального развития ниже представляет краткую информацию об изменениях, внесенных 25.05.2026 года в договор **N ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/77** заключенный **04.12.2024 года** в результате процедуры закупки под кодом **N ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/77** организованной с целью приобретения Строительных работ для своих нужд, и копию утвержденного в двухстороннем порядке документа, содержащего внесенное изменение.

Причина возникновения изменения:	Наличие основания для добавления нового пункта и приложения к договору
Описание изменения:	Добавление нового пункта и приложения к договору
Обоснование изменения:	Пункт 8.5 договора

Заказчик: Армянский фонд территориального развития